

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅ. Երկեր. հ. Ա. Պատմագիտական ուսումնասիրություններ. Երևան, ԵՂՀ հրատ., 2006, 652 էջ + 1 էջ ներդիր:

Խորհրդային դարձրջանում և հետո Հայաստանում ու արտասահմանում հրատարակվել են Ն. Ադոնցի մի շարք երկեր, բայց և այնպես, դրանցից շատերը՝ ցրված այլ-այլ հրատարակություններով, հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով դժվարամատչելի են նույնիսկ մասնագիտական շրջանակների համար: Մինչդեռ դրանք արժանի են հասարակական ամենալայն ճանաչման: Եվ Ադոնցի երկերի ներկա հրատարակությունը, որը նախատեսվում է իրականացնել հինգ հատորով, որոնց պիտի հետևեն ևս երկու լրացուցիչ հատորներ, գալիս է լրացնելու այդ բացը:

Հայագիտության ընդհանուր համապատկերի վրա Ադոնցի և նրա երկերի վերաբերյալ արտահայտվելիս՝ դժվար է խուսափել գերադրական գնահատականներից, բայց դրանք, իրականում, միայն բառեր են, որոնք չեն կարող բնութագրել մեծ գիտնականին և նրա ժառանգությունը: Ստորև մենք կներկայացնենք միայն որոշ մտորումներ նրա երկերի առաջին հատորի առնչությամբ:

Առաջին զգացումը, որը մնում է ողջ հատորն ընթերցելուց հետո, հայ ժողովրդի և նրա պատմության նկատմամբ հեղինակի խոր հարգանքն է. «Հայությունը մի գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլև թավալում են հուժկու ալիքներ դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանոսը» (էջ 217): Աշխատությունները գրված են մեր ժողովրդի համար դաժան ժամանակներում: Հաղթողներին չեն դատում, իսկ մենք պարտվել էինք, և այդ պատճառով բազում էին դատողները և՛ մեզանում, և՛ մեզանից դուրս: Հատորի հոդվածները գրված են ոչ միայն մեր պարտված ժողովրդի պատմության խորին իմացությամբ, այլև այնպիսի հարգանքով, որը փոխանցվում է ընթերցողին: Ինչ կարող է տալ պատմաբանն իր ժո-

ղովրդի պատմության ողբերգական օրերին՝ ցեղասպանության ենթարկված, բնօրանի մեծագույն մասը կորցրած մարդկանց: Եղել են նաև այլ, փառավոր ժամանակներ: Վերածննդի ուղին պիտի հիմնվի նաև անցյալ փառքի վրա: Թվում է, թե հենց դա է եղել հեղինակին առաջնորդող ուժը: Դժվար է նմանօրինակ խորը զգացում առաջացնող մեկ այլ հեղինակի գործեր մատնանշել:

Երկրորդ զգացումը պատկառանքը և հիացմունքն է հեղինակի գիտելիքների նկատմամբ՝ լեզուների և լեզվաբանության, պատմական աղբյուրների ու պատմության, բանասիրության, առասպելաբանության, կրոնի, գրականության, հայագիտության և հարակից ոլորտների գիտական աշխատությունների ամենալայն իմացություն, որին հավասար մակարդակ, ցավոք, մենք այլևս չունեցանք մինչ օրս: Ադոնցներ, հիրավի, հաճախ չեն ծնվում: Հիշենք միայն նրա մի գործընկերոջ խոսքը՝ Ադոնցը «ի ծնե լեզվաբան էր, հմուտ գիտնական, որը տիրապետում էր սանսկրիտից ու պահլավերենից սկսած մինչև սեպագիրը, բյուզանդական հունարենից մինչև ժամանակակից պարսկերենը: Նա միաժամանակ հնագետ, պատմաբան և բանասեր էր..., վաստակավոր ուրարտագետ, ասուրագետ և իրանագետ»¹: Միակ պատմաբանը, որը կարող էր իրագրության ամենաբարձր մակարդակով ներկայացնել Հայաստանի ողջ պատմությունը սկսած սեպագիր դարաշրջանից մինչև XX դար, Միջագետքի, Իրանի, հելլենական ու արաբական աշխարհների ու Կովկասի պատմական իրականության, մշակույթների ու լեզուների խորին իմացությամբ, Ադոնցն է:

¹ Ռ. Գրուսե. Առաջաբան. – Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 3-4:

Երրորդը՝ Ադոնցի՝ որպես գրողի ու մտածողի վառ անհատականությունն է: Հեղինակը հին, կողմնակալ աղբյուրների հիման վրա բացահայտում է պատմական բարդ իրականության համապատկերը, հաճախ նորոպի ներկայացնում և վերագնահատում հայտնի երևույթները, շարժումները, դեպքերն ու անձերը: Վերլուծական միտք, լայն ընդհանրացումների կարողություն, շարադրանքի գիտական՝ փոքրաքանակ փաստերի հիման վրա նվազագույն հիպոթետիկության հասցված, բայց դրա հետ մեկտեղ՝ գեղագիտական կամ նույնիսկ՝ գեղարվեստական ոճ: Ադոնցի աշխատություններում ամենուրեք սփռված են մտքեր ու պատկերներ, որոնցից կարելի է հայոց պատմության ուսանելի աֆորիզմների մի ամբողջ հավաքածու ստեղծել: Ահա օրինակներ միայն մեկ հոդվածից՝ «Այսօրվա գեղջուկ Հայաստանը, կար ժամանակ, որ աշխարհիս ամենից արիստոկրատ երկիրն էր» (էջ 220): «Հայրենիքի և ազգի սերը մի բնական զգացմունք է, որ բխում է մարդու բնությունից իսկ և կապված է անգամ անհատական ինքնասիրության, և միայն արատավոր մարդիկ կարող են թափուր լինել այդ զգացմունքից, ինչպես դատարկ են և սեփական արժանապատվությունից» (էջ 223): Եվ ամենաուսանելին, Ադոնցի դասը՝ «Մեր ազգային թերությունն այն է, որ անկարող ենք ընթանալ իրերի հետ ոտն առ ոտն, շտապում ենք կանխել դեպքերը, առջևն ընկած վազում ենք, փոխանակ հետևից գնալու, գնալու համրաքայլ» (էջ 239):

Հատորը կոչվում է «Պատմագիտական ուսումնասիրություններ», բայց նրանում գետեղված աշխատությունները պատկանում են մի քանի ուղղության՝ առասպելաբանություն, հայոց պատմության խնդիրներ, հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, քննադատական հոդվածներ: Այդ աշխատությունները մեծավ մասամբ լայնորեն ծանոթ են մեր գիտական հանրությանը, և դրանց մանրամասն քննարկումն ու գնահատումը դուրս է մեր նպատակներից: Ընթերցողների լայն շրջանների համար, կարծում ենք, առավել հետաքրքիր և կարևոր կլինեն բուն հայոց պատմությանը վերաբերող հետևյալ հոդվածները՝ «Մարգ-

պան Վասակը պատմաբանների դատի առաջ», «Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում» և «Բագրատունյաց փառքը»:

Առաջինը լավագույն օրինակ է առ այն, որ պատմությունը, և մասնավորապես՝ հայոց պատմությունը, ի հակադրություն ժողովրդական՝ առասպելական-վիպական ընկալման և կողմնակալ պատմագիրների ու (կրոնական, կուսակցական, գաղափարախոսական) պատմաբանների ցանկության, չի կարող դիտվել որպես սև ու սպիտակ, դրական և բացասական, ամեն ինչում ճիշտ ու ամեն ինչում սխալ, «հայրենասեր» և «դավաճան» հերոսների պարզունակ պայքարի մի ընթացք: Այս մոտեցումը ևս, իմիջիայլոց, կարելի է դիտել հայոց պատմության նկատմամբ հեղինակի հարգալից վերաբերմունքի համատեքստում: Եվ, իրոք, մեր պատմությունը չպետք է դիտվի որպես մշտական դավաճանությունների ու մատնությունների մի ընթացք: Պատմիչների կողմնակալ և ոչ բավարար տեղեկությունների հիման վրա արվող վերակազմությունները և գնահատականները վիճելի են ընդհանրապես: Բայց և այնպես, ավանդական եկեղեցական պատմիչների կողմից դավաճան համարվող Վասակը, որոշ շեշտեր փոխելիս, վերածվում է իր պատասխանությունը խորապես գիտակցող և, ըստ այդմ, ոչ միարժեք ճակատային գրոհով, այլ մտածված և հավասարակշռված գործող անհատի:

Երկրորդը, թերևս առավել ուսանելին, հայագիտության լավագույն աշխատություններից մեկն է, հայոց պատմության մեջ Բագրատունիների և Մամիկոնյանների քաղաքական գծերի պատմությունը, «որ իր քաղաքական ոգորումներով նման է մեր տակավին թարմ ազատագրական շարժման և խրատական շատ նկատառումներով» (էջ 219): Հոդվածում քննարկվում և իմաստավորվում է, թե ինչպես քաղաքականության մեջ խոհական, հավասարակշռված բագրատունյաց գիծը անկախության հասցրեց Հայաստանը, իսկ Բագրատունիներն, ի վերջո, տիրեցին համարյա ողջ Հայկական լեռնաշխարհն ու Անդրկովկասը, մինչդեռ Մամիկոնյանների տոհմը, որդեգրելով հերոսական անհաշտ պայքարի ու-

դին, ի վերջո, կործանվեց և անհետացավ պատմության թատերաբեմից:

Երրորդը՝ Բագրատունիների հաջողության և տոհմի տարբեր ճյուղերի՝ Անդրկովկասում տիրապետության հասնելու պատմությունն է:

Հեղինակը ջատագովն է «բագրատունյաց» գծի, որի առաջին ներկայացուցիչն է Վասակ Մյունին: Բայց ինչպիսի սեր և հարգանք կա Մամիկոնյան «չնաշխարհիկ հերոսների» և ողջ տոհմի՝ «հայ ազգի բարախուն սրտի» նկատմամբ: «Եթե Մամիկոնյանները հայ խաչելության և սրի շողշողուն քարերն են, Բագրատունիք հայ խոհակալության քարե պուներն են» (էջ 241): Քաղաքական այս երկու հոսանքները փոխլրացնում են իրար: Վարդանանց պատերազմը հայոց ժողովրդական ավանդույթում և պատմության մեջ վաղուց ի վեր ձեռք է բերել «արարչության առասպելի»՝ «հարացուցային» դեր ու նշանակություն, որից կարող է սկսվել, որի միջոցով կարող է իմաստավորվել և որի հետ կարող է համադրվել ու համեմատվել հետագա պատմության ամեն մի դրվագ: Որպես այդպիսին, Վարդանանց պատերազմը մշտապես պահպանում է իր հրատապությունը, և Ադոնցի՝ «բագրատունյաց» գծի արժևորման հողվածների վերահրատապակությունը ուղղակի անհրաժեշտություն էր մեզանում:

Գողմնակալ պատմիչների և պատմաբանների տեսակետների քննադատությունն է հնչում նաև «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ» հոդվածում: Տիգրան Մեծի վերաբերյալ հունա-հռոմեական աղբյուրներում, որտեղ նսեմացվում է Տիգրանը, և գովերգվում են հռոմեացիները՝ «բոլոր այն դեպքերում, երբ հռոմեացիների հնարագիտությունը հակադրվում է նրանց հակառակորդների հիմարությանը, մենք կարող ենք վստահ լինել, որ գործ ունենք միայն միտումնավոր կեղծիքի հետ...» (էջ 165):

Իրականության «սև և սպիտակ» պարզունակ մոտեցման անընդունելի լինելու մի օրինակ է և Գ. Գալեմբեարյանի՝ Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյանի մասին գրքի գրախոսությունը: Ըստ Ադոնցի, հեղինակը հայերի՝ կաթողիկոսության անցումը՝ միայն որպես կրոնական ճշմարտության որոնում, իսկ հայ կաթողիկոսներին, ի հակադրություն

լուսավորչականների, ամենուրեք և միշտ դրական ու ճիշտ ներկայացնելով, իրականում ոչ թե բարձրացնում և արժևորում, այլ նսեմացնում է, եթե ոչ ժխտում կաթողիկական հոսանքի պատմական նշանակությունը մեր կյանքում (էջ 557):

Հայ-բյուզանդական ուսումնասիրություններում հիմնականում վերհանվում է հայկական տարրի խաղացած առանցքային դերը Բյուզանդիայի վաղ պատմության ընթացքում: Աղբյուրների ուշադիր և անկողմնակալ քննությամբ, երբեմն համարձակորեն վերագնահատվում են պետական որոշ գործիչների կատարած պատմական դերերը: Ներկայացվում են բյուզանդական գահի առաջին հայ հավակնորդները («Արտավան Արշակունի», «Պատկերների խնդիրը», «Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա», «Վարդ Մամիկոնյան», «Վասիլ Հայագն»):

Անհնար է մեկ առ մեկ հիշել և իրազեկ կարծիքներ հայտնել այս հատորի բոլոր հոդվածների վերաբերյալ: Դրա համար անհրաժեշտ է ունենալ հեղինակի հետ համադրելի գիտելիքներ: Ուստի, ելնելով մեր մասնագիտական պատրաստվածությունից և հետաքրքրությունից, առավել մանրամասնությամբ կանդրադառնանք հատորի՝ առասպելաբանությանն առնչվող հոդվածներին՝ «Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև», «Հին հայոց աշխարհայացքը», «Տորք աստված հին հայոց» և «Տարկուն հին հայերի մոտ»:

Մրանցից առաջինում ցույց է տրվում իրանական առասպելական-վիպական ավանդույթի ազդեցությունը Գրիգոր Լուսավորչի պատմության մեջ: Այս մոտեցումը հետագայում զարգացվեց Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից²:

² Կ. Մելիք-Օհանջանյան. Ազանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը. - ՊԲՀ, 1964, № 4: Ազանգեղոսի երկում առասպելական մոտիվների վերաբերյալ տե՛ս նաև Լ. Աբրահամյան. Չոհի մարմնից աճող երկնային տաճարը. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը ազգաբանական տեսանկյունից. - Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, Ա. Ե. Բեռոսյան. Армянский эпос и мифология. Ереван, 2002, с. 120-124.

Վերջին երկուսը նվիրված են հայոց վիպական հերոսներից Տորք Անգեղայի կերպարի ծագման խնդրին: Հոդվածները տպագրված են, համապատասխանաբար, 1911 և 1927 թթ.՝ խեթագիտության արշալույսին, և որոշակի կարիք կա դրանք դիտել ժամանակակից տվյալների և ուսումնասիրությունների լույսի տակ: Հեղինակը համադրում է Տորք անունը անատոլիական *Tarhu-/Tarku-* դիցանկանական հիմքի հետ: Նախ, անհրաժեշտ են որոշակի ճշտումներ: Տեղույր (տեքստում՝ Տիշույ, մինչդեռ երկրորդ հոդվածի ֆրանսերեն բնագրում՝ Téchoup) ոչ թե «հայոց ցեղի» (բնագրում՝ «խեթական ժողովուրդների»), այլ խուռական գերագույն՝ ամպրոպի աստվածն է, ուրարտ. Թելեբայի կրկնակը: Վանի շրջանի Տոսս անվանումն արտացոլված է ուրարտական արևի աստծու կնոջ՝ *Tušruca / Tušruni* դիցուհու անվան մեջ և, այսպիսով, ամենայն հավանականությամբ, կապ չունի Տեղույի հետ (էջ 84, 86): Անատոլիական՝ խեթախուռական ավանդություն ամպրոպի աստծու բնիկ անունը կազմվում է *Tarhun(t)-*, երբեմն՝ *Tarku-* հիմքով (հնդեվրոպական **terH-* «հաղթել, անցնել»): Այս անունը բազում ձևերով է հայտնի գալիս Փոքր Ասիայի, Բալկանների և Բոսալիայի հին անվանաբանության մեջ (լիկ. *Trqqa-*, *Trqant-*, լիդ. *Τάρχων*, թրակ. *Торкос*, *Торкуос*, էտրուսկ. *Tarχῶν*, լատ. *Tarquinius* և այլն)³: Հայ.

Տորքը այնքան էլ նման չէ անատոլիական *Tarhun-*ին, որը հայերենում կանոնավոր կերպով պիտի փոխառվեր որպես *Տարխուն-, իսկ *Tarku-*ն՝ *Տարկ/զ/ք- (սեպագրում օ-ն հաղորդվել է ու-ով, թրակյան անկանոն ձևերը՝ տորկ-, տարկ-ի փոխարեն, կարող են բացատրվել միջնորդավորված փոխառությամբ պայմանավորված աղավաղմամբ): Սովորաբար որպես Տորք ներկայացվող անունը, դատելով ըստ ձևագրերի, ամենայն հավանականությամբ, սխալ ձև է՝ ճիշտն է Տուրք, մի անուն, որն ավանդված է հայոց մեջ⁴: Տուրք Անգեղեյ՝ «Անգեղ աստծու տուրք» ձևը համադրելի է Սեբեոսի պատմության առաջին գլխի անանուն հեղինակի Բագարատ - Անգեղի հետ, որտեղ իրանական Բագարատը ևս ուղղակի նշանակում է «Աստծու տուրք»⁵: Խորենացու՝ Անգեղի «տգեղ» մեկնաբանությունը հաճախ համարվում է «ժողովրդական ստուգաբանություն», մինչդեռ այն մոտ է իսկույթյանը: Ան-գեղ դիցանունը, հնդեվրոպական **wel-* «տեսնել» արմատից (հմմտ. գեդեցիկ «տեսքոտ»), կարող է տարբեր մեկնաբանություններ ունենալ՝ «անտես, անտեսք, տգեղ»: Հայ առասպելաբանության համատեքստում Տուրք Անգեղյան, այսպիսով, հակադրվում է Արա Գեդեցիկին, ինչը ևս մեկ փաստարկ է այս ստուգաբանության օգտին: Անգեղը Աստվածաշնչի թարգմանության մեջ հանդես է գալիս միջագետքյան մահվան և պատերազմի աստված Ներգալի փոխարեն: «Այս ու «այն» աշխարհների բնակիչները փոխադարձաբար անտեսանելի են համարվել ամենուրեք, և այսպիսով, հայոց Անգեղ «անդրաշխարհի աստված» դիցանունն ուղղակի համապատասխանում է հունական անդրաշխարհի աստ-

³ Տորքի այս մեկնաբանության վերաբերյալ տե՛ս նաև Գ. Կ а п а н ц я н. Историко-лингвистические работы. Т. 1, Ереван, 1956, с. 273-274; Գ. Ջ ա հ ո լ յ ա ն. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձանունների լեզվական աղբյուրները.- ՊԲՀ, 1981, №3, էջ 60, J. R u s s e l l. Ancient Anatolians and Armenians.- The Second International Symposium on Armenian Linguistics. Proceedings. Yerevan, 1993 և այլն: Խեթախուռական ամպրոպի աստծու անվան վերաբերյալ տե՛ս С. Л. Н и к о л а е в, А. Б. С т р а х о в. К названию бога громовержца в индоевропейских языках.- Балто-славянские исследования. 1985, М., 1987, с. 150; С. W a t k i n s. A Celtic Miscellany.- Proceedings of the Tenth Annual UCLA Indo-European Conference. Washington D. C., 1999, p. 12-14. Նույն դիցանվան ուշ փոքրասիական մի շարք ձևեր (Таркулис, Таркулис և այլն)՝ P. H. J. H o u w i n k t e n C a t e. The Luwian Population Groups of Lucia and

Cilicia Aspera During the Hellenistic Period. Leiden, 1961, p. 232-233.

⁴ Մ. Ա բ ե դ յ ա ն. Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ.- Երկեր. հ. Ը, Երևան, 1985, էջ 154-158: Այս աշխատությունն առաջին անգամ տպվել է 1899-1901 թթ., բայց Ադոնցը չի հղում այն:

⁵ Մ. Ա բ ե դ յ ա ն. Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 56-58:

ված Հադեսին, որի անունը ևս նշանակում է «Անտեսանելի»⁶:

Այսպիսով, կարծում ենք, որ Տորք Անգեղյայի Ադոնցի առաջարկած անատոլիական մեկնաբանությունը, որը կրկնվել է բազմաթիվ աշխատություններում, պետք է վերանայել: Ձևաբանորեն Տուրքը առավել համադրելի է ուրարտական Turani դիցանվանը, որը, ըստ Գ. Ջահուկյանի, կապվում է հենց հայ. տուր(ք)-ին⁷: Բայց դա չի նվազեցնում այդ հոդվածների պատմական արժեքը: Միայն մեկ օրինակ այն բանի, թե Ադոնցի հոդվածները որքան կարևոր են հայագիտության համար: Տարկուի մասին հոդվածում է առաջին անգամ առաջ քաշվում այն միտքը, որ Հայկի Թորգոմյան ծագումը կարող է կապված լինել հիշյալ անատոլիական դիցանվան հետ (էջ 92): Այս կարծիքը հետագայում կրկնվել և զարգացվել է Ս. Հարությունյանի ու մեր աշխատություններում⁸: Այս, որ ավելի կարևոր է հայ ժողովրդի ծագման համատեքստում, այս հոդվածում է առաջին անգամ հատուկ ուշադրություն դարձվում այն հանգամանքին, որ Հայկի և հայերի Թորգոմյան ծննդաբանությունը, որը մինչև այժմ էլ երբեմն հիմք է հանդիսանում հայոց նախապատմության ու ազգածնության մեջ Կապադոկիայի (Թորգոմի տուն, Թիլ-Գարիմուն) դերի գերազանցատման համար, ստեղծվել է համեմատաբար ուշ, վաղ քրիստոնյա հեղինակների կողմից, մինչդեռ ավելի հին հեղինակ Հովսեփոս Փլավիոսի մոտ Թորգոմը փոյուզացիների նախահայրն է (էջ 92)⁹:

⁶ Հադեսի այս ստուգաբանության վերաբերյալ տե՛ս հատկապես R. B e e k e s. Hades and Elysion. Mir curad: Studies in Honor of Calvert Watkins. Innsbruck, 1998, p. 17-19.

⁷ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայկական շերտը ուրարտական դիցարանում.– ՊԲՀ, 1986, №1, էջ 53: Տուրք Անգեղյայի այս մեկնաբանությունը տե՛ս Ա. Ե. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 32-36, Ա. Պ ե տր ու յ ա ն. Արամագր. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Երևան, 2006, էջ 34-42:

⁸ Ս. Հ ա Ր ու Յ յ ու յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 21-22, Ա. Ե. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 62:

⁹ Հայերի այս ծննդաբանությունն առաջին անգամ ի հայտ է գալիս Հիպոլիտոսի մոտ, ապա կրկնվում Եվսեբիոսի ու հետագա հայ հեղինակ-

«Հին հայոց աշխարհայացքը» հայ առասպելաբանության ամենահայտնի աշխատություններից է (գրվել և հրատարակվել է 1926-27-ին, «Հայրենիք» ամսագրում, ապա վերահրատարակվել 1948-ին, հեղինակի հետմահու՝ փարիզյան «Պատմական ուսումնասիրություններում»): Այն նվիրված է հիմնականում հայ առասպելաբանության մեջ Թամուզ-Իշտար տիպի աստվածային գույգի բացահայտմանը վաղնջական ժամանակներից մինչև քրիստոնեություն: Հոդվածի նախաբանն այսօր էլ կարող է որպես ներածություն դրվել հայ առասպելաբանության և նախաքրիստոնեական կրոնին նվիրված ուսումնասիրությունների համար, բայց առկա է նաև ժամանակի շունչը. «Զբաղվել թաղված աստվածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստվածներն են նաև ոչինչ համարվում, գուցե և ունայն աշխատանք է: Մակայն, աստվածուրացությունը ոչ թե միայն բարոյական լքումի նշան է, այլ և ինքնակոծության վատթար տեսակը:

Արդարև, ի՞նչ է աստվածությունը, եթե ոչ մարդկության վեհաշունչ երազների հայտնություն, և ի՞նչ է պատմությունը, եթե ոչ նորանոր աստվածությանց որոնումներ, նորանոր բարձունքի տենչանք» (էջ 14):

Հոդվածը սկսվում է Ատտիսի ծեսերի և կերպարի քննությունից, անցնում հայոց համապատասխան կերպարին՝ Արային, ապա՝ այն հեթանոսական տարրերին, որոնք պահպանվել են հայոց և վրաց քրիստոնեական դարձի լեզենդներում (Լուսավորիչ, Տրդատ և հռիփսիմյան կույսեր, Նունե/Նինո): Քննարկվող հարցերի շուրջը հայագիտության մեջ արդեն գիտական որոշակի կարծիքներ էին ձևավորվել¹⁰: Բայց բոլոր դեպքերում Ադոնցը հարստացնում է քննության աղբյուրագիտական բազան, խորացնում վերլուծությունը և հանգում նոր արդյունքների: Այսպես, Արայի առասպելի վերաբերյալ բերվում է Նինոսի հունական

ների գրքերում. տե՛ս Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, էջ 312-313:

¹⁰ Տե՛ս հատկապես Ս. Մ բ ե դ յ ա ն. Հայ ժողովրդական առասպելները... և Ս. Մ ա - տ ի կ յ ա ն. Արա Գեղեցիկ. Վիեննա, 1930 (ամսագրային տարբերակը տպագրվել էր «Հանդես ամսօրյա»-ում՝ 1923-ին):

վեպը (էջ 23–25), իսկ «Ձուկը թոնրում» լեզենդների շարքը հարստացվում է ևս մի հետաքրքիր տարբերակով (էջ 36–37, ծանոթ. 2): Այս հոդվածը իրական հիմք է այն աշխատությունների համար, որտեղ քննվում են հայոց հեթանոսական տարրերի դրսևորումները քրիստոնեական համակարգի ներսում: Մյուս կողմից, այն կարող է հիմք ծառայել առավել խոր վերակազմության համար: Հայոց նախաքրիստոնեական կրոնը և առասպելները ենթարկվել էին հզոր իրանական ազդեցության, բայց իրանական անունների տակ հաճախ ի հայտ են գալիս հնագույն տեղական դիցաբանական կերպարները:

Ամփոփելով, նշենք, որ Ադոնցի երկերի հրատարակությունը երևույթ է մեր իրականության մեջ, որն իր արձագանքը կունենա երկրի և՛ գիտական, և՛ հասարակական կյանքում: Մեր հասարակությունը պետք է շնորհակալ լինի երկար տարիներ Ադոնցի գիտական ժառանգությանը զբաղվող և ներկա հրատարակությունը պատրաստած պատմաբան Պետրոս Հովհաննիսյանին, այն նախաձեռնած ու իրականացրած Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամին և նրա Հայկական մասնաճյուղի տնօրեն Զավեն Եկավյանին:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ